



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 12262  
Յունուար 27, 1966

Արժանաշնորհ  
Տ. Գառնիկ ԹՀՆՅ. Հալլաճեան  
Հոգեւոր Հովիւ Սրբոց Ղեւոնդեանց Սկեղեցւոյ  
եւ Նախագահ Գառուարժան Միսկան Խորհուրդի  
Տէրլոն.

Սիրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք Ձեր 1966 Յունուար 25 թուակիր տեղեկագիրը, որով  
կը տեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Յունուար 16ին գումարուած  
Ձեր Տարեկան Միսկան Ժողովին մէջ կատարուած է Միսկան Խորհուրդի մաս-  
նակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խըն-  
դըրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանո-  
նադրութեան արժանադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է ըստ  
օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ անգամ Միսկան Խոր-  
հուրդի.

Տիրոջ՝ Փօլ Խաչիկեան  
ձէյմս Գօյանեան  
ձան Ոսկեան  
էնտի Տապաղեան

Կը յանձնարարենք որ Ձեր տարեկան տեղեկագիրը եւ հաշուեկշիռը,  
ինչպէս նաեւ Միսկան Խորհուրդի նոր դիւանի անուն-հասցէները Առաջնոր-  
դարան ղրկէք առաջին պատեհութեամբ:

Օրհնելով Միսկան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ  
Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը,  
ի պայծառութիւն Ս. Սկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ  
մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթաբար

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի



# ST. LEON'S ARMENIAN CHURCH

12-61 Saddle River Road, Fair Lawn, N. J.

ՀՈԳԱՌԱՐՉՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՅուՆուար 25, 1965

Գերաշնորհ  
Տ. Սիրոն Արք. Մանուկեան  
Առաջնորդ Ամերիկահայոց  
Նիու Եորք, Նիու Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Համաձայն Թեմիս Սահմանադրութեան, Եկեղեցիս ունեցաւ իր տարեկան Անդամական Ժողովը: Սոյն Ծխական Ժողովին տարեկան տեղեկագիրները ըստանալէ ետք կատարուեցաւ Հոգաբարձական մասնակի ընտրութիւն չորս անձերու համար: Հետեւեալ անդամները ընտրուեցան երկու տարուայ համար. - ֆոլ Խաչիկեան, ձէյմս Պօյաճեան, ձան Ոսկեան եւ Էնտի Տապաղեան:

Մենք լիայոյս ենք որ այս անունները կ'ստանան Ձեր սրբազնութեան բարեհաճ վաւերացումը, որպէսզի Հոգաբարձութեան նոր կազմը կարենայ շուտով ձեռնարկել իր եկեղեցաշէն գործունէութեան, Ձեր օրհնութեամբը միատեղ:

Մենք առանձին ծրարով կը ղրկենք Ձերդ սրբազնութեան ՅուՆուար 16-ի Ծխական Ժողովի եւ անցեալ տարուան տարեկան տեղեկագիրը:

Մատչելով Ձեր ս. աջոյն  
*Quaff H. S. Sargsyan*  
Գառնիկ քչյն. Հալլաճեան  
Հովիւ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ

*Վարդապետ*  
*Արսէն Մարտիրոս*